I

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խորհրդային Միության վրա հիտլերյան Գերմանիայի կայծակնային հարձակման առաջին իսկ օրվանից, 1939 թ. սեպտեմբերի 1-ին սկսված երկրորդ համաշխարհային պատերազմի ծանրության կենտրոնը տեղափոխվեց խորհրդադերմանական ռազմաճակատ: Հենց այստեղ էր վճռվում ոչ միայն խորհրդային ժողովուրդների, այլև համաշխարհային քաղաքակրթության ճակատագիրը:

Խորհրդային ժողովրդի պատերազմը ֆաշիզմի դեմ հանդիսացավ հիրավի Հայրենական մեծ պատերազմ աշխարհի մեկ վեցերորդ մասը կազմող երկրի բոլոր ժողովուրդների համար: Միասնական շարքերով, համախմբված հանդես եկան ռուսն ու ուկրաինացին, հայն ու վրացին, բելոռուսն ու ղազախը, հրեան ու ուզբեկը – ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները: Ամենուր սկսվեց զինակոչը, զինվորական ստորաբաժանումների ու զորամասերի, միավորումների կազմավորումը. առաջնահերթ խնդիր դարձավ պատերազմական հունով ժողովրդական տնտեսություն վարելու դործընթացը:

Հայաստանը վերածվեց ռազմական ճամբարի: Խորհրդային Միության և Սփյուռքի հայերը հանդես եկան ընդդեմ ֆաշիզմի, ընդդեմ նրա ցեղային-ռասայական տեսության և դոբծի[1]*:*

Հայերը լավ էին հիշում և երբեք չեն մոռանա Օսմանյան կայսրությունում կայզերական Գերմանիայի դիտությամբ և հովանավորությամբ 1915 թվականին երիտթուրքերի կազմակերպած արևմտահայության հրեշավոր ցեղասպանությունը, պապենական հողերի հայաթափումը, նյութական մշակույթի ավերումը[2]*: Այդ մասին նորից հիշեցրեց «Պրավդա» թերթը 1941 թ. օդոստոսի 25-ի առաջնորդող հոդվածում*[3]*: Արյունարբու Արդուլ Համիդ II-ի կառավարման առաջին իսկ օրերից իրականացվող հա-*

---

1 Советская Армения в годы Великой Отечественной войны (1941 – 1945). Сборник документов и материалов. Ереван, 1975.

2 *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ. Երևան, 1982:* Армянский вопрос и геноцид армян в Турции (1913 – 1919). Материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний В. А. Микаелян. Ереван, 1995.

3 "Правда", 25 августа 1941 г.

յերի տեղահանման, իսլամացման, ցեղասպանության պետական ծրագրով Օսմանյան ամբողջ կայսրությունում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, Մեծ Հայքում բնաջնջվեց և տեղահան արվեց գրեթե ողջ հայությունը: 40 տարվա ընթացքում՝ 1876 թվականից 1916 թվականը՝ արդեն երիտթուրքերի կառավարման օրոք, հայերի թիվը կայսրությունում պակասեց 15 անգամ, 3 միլիոնից հասնելով 200 հազարի:

Հազարավոր հայեր ապաստան գտան Արևելյան Հայաստանում, Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում, Ռուսական կայսրության այլ տարածաշրջաններում՝ փրկվելով ֆիզիկական բնաջնջման վտանգից, կրոնական հետապնդումներից և հալածանքից: Դրա ապացույցն էր Ռուսական կայսրության տարածքում մինչև 1917 թ. հայերի ավելի քան վեց անգամ աճը: Խորհրդային Հայաստանի առաջին իսկ տարիներից սկսվեց սփյուռքահայ բեկորների տունդարձը:

Հայերը լավ էին հասկանում, որ ֆաշիզմի մարդատյաց ռասայական տեսությունը և քաղաքականությունը հետապնդում էր նույն նպատակը, ինչ որ օսմանիզմի, պանթյուրքիզմի, երիտթուրքերի ջարդարարական գաղափարախոսությունն ու պրակտիկան:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կազմակերպված հայերի հրեշավոր ցեղասպանությունը ոգեշնչում էր Հիտլերին, որը հույսը գնում էր մարդկային հիշողության ինգեֆերենտության և մոռացության վրա: Ֆյուրերը գտնում էր, ինչպես և երիտթուրքերը, որ գլխավորը միայն տարածքի նվաճումը չէ, այլ տեղաբնիկների՝ տերերի իսպառ ոչնչացումը, բնաջնջումը և արտաքսումը: «Վերջիվերջո ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածները»,– հայտարարել է Հիտլերը 1939 թ. օգոստոսի 22-ին զինվորական ընտրանու առաջ ունեցած ելույթում կոչ անելով անխնա ոչնչացնել լեհերին, հրեաներին, սլավոններին...[4]

Փաստաթղթերը հաստատում են, որ Հիտլերը, Գյորինգը, Ռոզենբերգը և գերմանական ֆաշիզմի մյուս պարագլուխները չէին վստահում հայերին, նրանք ընդգծում էին հայերի «հատուկ անբարյացակամությունը գերմանացիների նկատմամբ», նրանց ռուսամետությունը:

Խորհրդային Միության վրա հարձակվելու նախօրյակին՝ 1941 թ. հունիսի 18-ին, Թուրքիան և Գերմանիան կնքեցին բարեկամության և չհարձակվելու մասին պայմանագիրը: Ռազմավարական պլաններում Թուրքիային ընդգրկելով ԽՍՀՄ-ի դեմ Գերմանիան ապահովեց իր զորքի աջ թևը: Թուրքիան թույլ տվեց, որ Սև ծով մտնեն գերմանական և իտալական ռազմանավեր: Անդրկովկասին հարող տարածքում Թուրքիան կատարեց զինուժի զգալի կուտակում՝ այն հասցնելով 26 դիվիզիայի: Նրանք սպասում էին իրենց ժամին՝ Ստալինգրադի անկմանը՝ Հայաստան և Անդրկովկաս ներխուժելու համար: Բեռլինում աշխուժացել էր պանթուրքիստների գործունեությունը, որոնց կազմակերպած ժողովներում ներկա էին լինում և Հիտլերը, Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ֆոն Պապենը, ոչ անհայտ Նուրի փաշան:

Գերմանիայի բացահայտ թուրքամետ և հակահայկական քաղաքականությունը նոր դրսևորում ստացավ 1943 թվականի փետրվարին՝ Բեռլի-

4 The New York Times, 24.8.1945, p. 7.

նից Ստամբուլ Թալեաթ փաշայի աճյունի տեղափոխումով և Ստամբուլում վերաթաղումով: Այս ամենը, մասնավորապես հարավից սպառնացող վտանգը, հայտնի էր հայերին: Եվ պատերազմի առաջին իսկ օրերից նոր ուժով պոռթկացին զենքի կոչված հայերի ոսոխի դեմ ընդվզումների բազմադարյան մարտական ավանդույթները: Զորակոչվեց ավելի քան կես միլիոն մարդ՝ Հայաստանում և ԽՍՀՄ-ի այլ հանրապետություններում բնակվող հայերի հինգերորդը: 1 միլիոն 320 հազար բնակիչ ունեցող Հայաստանը բանակին տվեց մոտ 250.000 զինվոր: Միայն հանրապետությունում զորակոչված հայերից կազմավորվեցին 8 զինվորական միավորումներ՝ 76, 89, 136, 138, 390, 408, 409 և 261-րդ դիվիզիաները: Հայաստանում վերակազմավորվեցին նաև 61, 151, 236, 320, 406-րդ դիվիզիաները:

Քառորդ միլիոն հայեր ծառայության էին կոչվել կամ կամավոր մեկնել ռազմաճակատ Վրաստանից, Ադրբեջանից, Հյուսիսային Կովկասից, միջինասիական հանրապետություններից, Մոսկվայից, Լենինգրադից, Ուկրաինայից: Միայն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետությունը բանակին տվել էր 42 հազար մարտիկ՝ իր բնակչության քառորդը:

Հայերը կռվեցին ամենուրեք՝ Բրեստի ամրոցի պատերի տակ, մերձբալթյան հանրապետություններում, Լենինգրադում, Մոսկվայի մատույցներում, Ուկրաինայում, Բելոռուսիայում, Ղրիմում ու Վոլգայի ափերին, պաշտպանողական և հարձակողական բոլոր մարտերում: Նրանք մնայուն անուն են թողել բոլոր զորատեսակների տարեգրություններում, արիաբար մարտնչել են ցամաքում, օդում, ծովում, աչքի ընկել պարտիզանական ջոկատներում, եվրոպական երկրների գիմադրության շարժման շարքերում:

Հայերից կազմավորված 89, 390, 408, 409-րդը դիվիզիաները ոչ միայն պաշտպանեցին Կովկասը, այլև մարտերով անցան Կովկասյան նախալեռներից մինչև Ուկրաինա, Բալկաններ, Կենտրոնական Եվրոպա, Լեհաստան, Գերմանիա: Սխրանքների համար 409-րդ գիվիզիան արժանացավ «Կիրովոդրադյան» և «Բրատիսլավյան» անվանմանը[5]: Ստալինգրադի պաշտպանների շրջանում մեծ համբավ ձեռք բերեցին 136, 76, 138-րդ դիվիզիաները, նրանք արժանացան համապատասխանաբար 15-րդ և 51-րդ, 70-րդ գվարդիական դիվիզիաների կոչման[6]:

Հայոց ռազմական փառքի պսակն է 89-րդ կրկնակի շքանշանակիր, կարմրադրոշ Թամանյան դիվիզիան, որի 2 դնդեր արժանացել են նաև

---

5 Կ. Ա. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայկական ազգային զորամիավորումների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.).– «Պատմա-բանասիրական հանդես», 1995, № 1, էջ 53-72: 76-я Армянская стрелковая Краснознаменная им. К. Е. Ворошилова — 51-я гвардейская Витебская ордена Ленина дивизия. 1920—1945 гг. Сб. док. и мат. Составители: Арутюнян А. О., Арутюнян К. А. Ереван, 1976; Боевой путь 409-й стрелковой Кировоградско-Братиславской ордена Богдана Хмельницкого Армянской дивизии (1941—1945). Сб. док. и мат. Составители: Арутюнян А. О., Оганесян Г. Г. ч. 1. Ереван, 1980; ч. 2, Ереван, 1981; Боевой путь 89-й Армянской Таманской стрелковой дивизии (1942—1945 гг.). Сб. док. и мат. Составители: Арутюнян А. О., Арутюнян К. А. Ереван, 1985; С. М. С а р к и с я н. 408-я Армянская дивизия в битве за Кавказ. Ереван, 1985; Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՌԴ ՊՆԿԱ), ֆ. 390-րդ հրաձգային դիվիզիայի:

6 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 136-րդ (15-րդ գվարդիական) և ֆ. 138-րդ (70-րդ գվարդիական), 61-րդ, 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ հրաձգային դիվիզիաների:

Սևաստոպոլյան կոչման: Արժանապատիվ մասնակցելով Կովկասի պաշտպանությանը, ապա և Հյուսիսային Կովկասի ու Ղրիմի ազատագրմանը, դիվիզիան փառքով պսակվեց նաև Լեհաստանում ու Գերմանիայում ծավալված մարտերում: Դիվիզիան ամուր դիրքեր գրավեց Օդերի ափին, որը պատմության մեջ մտավ որպես «Հայկական պլացդարմ»:

89-րդ Հայկական դիվիզիան բոլոր ազգային դիվիզիաների մեջ միակն էր, որը գրոհով մտավ Բեռլին: Ռայխստագի պատերի տակ, հարակից հրապարակներում ու փողոցներում 14 հազար հայ զինվոր և սպա սլարեցին հայկական ավանդական քոչարին, ղրանով ազդարարելով մեր ժողովրդի հավերժությունը, հաղթանակի կամքը:

Խոշոր է հայ զորավարների՝ 63 գեներալների, հազարավոր սպանների ավանդը մարտի դաշտում շահած հաղթանակներում: Բարձր հրամկազմը մասնակցում էր զորքերի տակտիկական և ստրատեգիական գործողությունների սլանների մշակմանը և կենսագործմանը, ղեկավարում բրիգադներ, դիվիզիաներ, կորպուսներ, բանակ, ռազմաճակատ, ծովային և օդային նավատորմներ. շատ գեներալներ ռազմական խորհրդի անդամներ էին, քաղբաժինների պետեր:

Հանրահայտ են Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի, նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի (Տեր-Իսակյան), ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի (Խանֆերյանց), զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի անունները[7]:

Փառքով ու պատվով են սլսակվել Խորհրդային Միության 110-ի հասնող հայ հերոսներ և Փառքի շքանշանի բոլոր երեք աստիճանի 27 ասպետներ[8]:

Անմոռաց են ժողովրդի հիշողության մեջ և սրտում հավերժ կենդանի մնացած ավելի քան 250 հազար հայորդիների անունները, հայորդիներ, որոնք զոհվեցին ռազմաճակատի տարբեր հատվածներում, հանուն Հայաստանի, որը ոչ միայն ծննդավայր է, այլև Հայրենիք: Միայն Հայաստանից ավելի քան 100 հազար զոհվածների անուններ ամփոփված են Պատմության ինստիտուտի և մյուս գիտական հիմնարկների ուժերով կազմված և երեք հատորով հրատարակված «Հուշամատյանում»[9], որը տեղադրված է Պոկլոննայա Գորայում՝ Հայրենական մեծ պատերազմի թանգարան-ինստիտուտի ցուցասրահում: Հայաստանի յուրաքանչյուր քաղաքում և գյուղում կառուցվել են հուշակոթողներ նվիրված այդ բնակավայրերից զոհվածների հիշատակին:

Հայերը մեծ ավանդ ունեն ռազմաճակատի և թիկունքի կապերի ամրապնդման, հանրապետությունը ռազմական զինանոցի վերածման, վի-

---

7 Արմո Մալխասյան. Սովետական բանակի հայ գեներալները. Երևան, 1963; А. В. Казарян. Война, люди, судьбы. Кн. 1. Ереван, 1975; Кн. 2. Ереван, 1977; Кн. 3. Ереван, 1980; Кн. 4, Ереван, 1984; Советская Армения в годы Великой Отечественной войны (1941 – 1945). Сб. док. и мат. Ереван, 1975, с. 638 – 639.

8 Книга о героях. Ереван, 1985. Կ. Ա. Հարությունյան. Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945).– «Լրաբեր հասարակական գիտությունների», 1995, № 1, էջ 31-48:

9 Հուշամատյան, № 1, Երևան, 1995, № 2, Երևան, 1996, № 3, Երևան, 1998:

բավոր ռազմիկների ապաքինման գործում: Հայաստանը ռազմաճակատի համար արտադրում էր ավելի քան 300 տեսակի զենք, ռազմամթերք և հանդերձանք: Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում շատ հայեր գլխավորում էին ռազմական գործարաններ, գիտական լաբորատորիաներ, կոնստրուկտորական բյուրոներ, մշակում զենքի նոր տեսակներ:

Առանձնացնենք աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանին, ակադեմիկոս Աբրահամ Ալիխանյանին, քիմիկոս Լյուդվիգ Կնունյանցին, ավիակոնստրուկտոր Արտեմ Միկոյանին, ռազմաբժշկական ակադեմիայի պետ Լևոն Օրբելուն, Գորկու հրետանային գործարանի պետ Համո Յոլյանին, ԽՍՀՄ ճարտարապետական ակադեմիայի փոխպրեզիդենտ, Ստալինգրադի գլխավոր ճարտարապետ Կարո Հալաբյանին: Հայ գիտնականների ավանգի դնահատումն էր 1943 թ. նոյեմբերին, պատերազմի ծանր տարիներին, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումը: Դա նաև ապագայի նկատմամբ հույսի և հավատի հաստատում էր[10]*:*

Հայերը բարձր առաքինությամբ կատարեցին իրենց քաղաքացիական պարտքը այն երկրներում, որտեղ ճակատագրի բերումով նրանք ապրել են: Դաշնակիցների բանակում ֆաշիզմի դեմ մարտնչում էին ավելի քան 80 հազար հայեր: Շատ հայորդիներ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ռումինիայի, Բուլղարիայի ազգային հերոսներ էին: Մեծ էր հայ եկեղեցու դերը հակաֆաշիստական պայքարում: Սփյուռքահայության ուժերով կառուցվեցին «Ասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուները, ավիաէսկադրիլիաներ[11]*:*

Այս ամենը վերստին հաստատում է, որ ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակը նաև հայ ժողովրդի հաղթանակն է:

* * *

Ռուսական զենքի հաղթանակում հայերը իրենց ավանդն են բերել դեռ XVIII դարի վերջերին սուվորովյան արշավանքներում և 1812-1814 թվականի Հայրենական պատերազմում ու հականապոլեոնյան կամպանիայում, XIX դարի ռուս-թուրքական երեք և ռուս-պարսկական երկու, XX դարի սկզբի ռուս-ճապոնական և Առաջին համաշխարհային պատերազմներում[12]*:*

Պետրոս Մեծի ժամանակներից սկսած, հայ ազատագրական շարժման նոր փուլի սկզբնավորումով, ռուսական կայսերական բանակում կազմակերպվել էին հայկական առանձին զորաջոկատներ, ձևավորվել էր սպայական կորպուս: Նրանց հիմքը դրվեց 1723 թ. Ղզլարում և Սուրբ Խաչում (Բուգյոնովսկ) հայկական և հայ-վրացական էսկադրոնների կազմավորու-

---

10 *Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում. Երևան, 1994:*

11 Советская Армения в годы Великой Отечественной войны, с. 692—731.

12 М. Г. Нерсисян. Суворов и армяне. Ереван, 1982; Он же. Отечественная война 1812 года и народы Кавказа. Ереван, 1965; А. О. Арутюнян. Кавказский фронт. 1914—1917 гг. Ереван, 1971; *Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ. հ. 5, Երևան, 1974:*

մով: Հայկական էսկադրոնի հրամանատարը ջուղայեցի Աղազար դր Խաչիկն էր, 1734 թվականից ռուսական բանակի առաջին հայ գեներալը՝ Լազար Խրիստաֆորով անունով: Ավան Յուզբաշին նույն 1734 թ. ստացավ խանի աիտղոս: Խրիստաֆորովին փոխարինեց ղրիմահայ գնդապետ Պետրոս Կասպարովը[13], որի որդին՝ գեներալ-մայոր Իվանը, 18 տարի Տաղանրոգի բերդապետն էր, Վասիլին՝ գնդապետ: Գլխավոր բերդապետեր էին գեներալ-մայորներ Կոստանդին Յուզբաշը և Նիկոլայ Օդաբաշը[14]:

Մեծ էր Ա. Սուվորովի մերձավոր օգնականներից մեկի, Թուրքերի դեմ պատերազմներում աչքի ընկած Հովակիմ Խաստաթյանի համբավը ռուսական բանակում: 1792 թվականից գեներալ-մայոր Խաստաթյանը կայսերական փառարանված գնդերից մեկի հրամանատարն էր, նաև հմուտ դիվանագետ, Կոստանդնուպոլսում ռուսական կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ[15]:

Արդեն XVIII դարի երկրորդ կեսին առաջացան ռուսական բանակի առաջին հայ սպայական ընտանիքները, որոնք սերնդեսերունդ հավատարիմ մնացին հայրերի ու պապերի ավանդույթներին: Գեներալական նշանավոր ընտանիքներ էին Արամելիքները, Արզությանները, Ախշարումովները, Բեյբությանները, Դելյանովները, Գոլուխանյանները, Թումանյանները, Հախվերդյանները, Քալանթարյանները, Լազարյանները, Լոռվա Մելիքովները, Մադաթովները, Մելիքովները, Մելիք-Շահնազարյանները, Մարդանյանները, Ղորղանյանները, Սաղինյանները, Տեր-Ասատուրովները, Պոզոյանները, Փիրադյանները, Շելկովնիկովները... Հայկական էսկադրոնի նախկին վախմիստր, գեներալ Դմիտրի Ախշարումովը (գեներալ էր և եղբայրը՝ Վենիամինը) ոչ միայն հերոս զորավար էր, այլև 1812 թվականի Հայրենական պատերազմի առաջին պատմաբանը[16]: Հայկական էսկադրոնի մայոր Եսայի Հախվերդովի որդիները գեներալ-լեյտենանտներ էին: Նրա որդի Ֆյոդորը հայ սպաներից առաջինը Կովկասում ստացավ Սուրբ Գևորգի շքանշան՝ 1807 թ. Գյումրիի համար մղված մարտերում: Նա 9-րդ հրետանային բրիգադի հրամանատար էր, 1808-1820 թթ. եղել է Վրաստանի և Չեչնիայի կառավարիչ, Ղզլարի զինվորական պարետ, իսկ Եսայու մյուս որդի Վասիլին՝ գահաժառանգներ Նիկոլայի և Միխայիլի զինվորական դաստիարակն էր[17]:

Ռուսական կայսրության բնակչության 0,96 տոկոսը կազմող հայերը 150 տարվա ընթացքում, ոչ լրիվ տվյալներով, բանակին տվել էին 155 գեներալ. 1912 թ. ռուսական բանակի բոլոր գեներալների 2,1 տոկոսը, ռուսներից (այդ թվում և ուկրաինացիներ ու բելոռուսներ), գերմանացի-

---

13 Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного содружества. Исследование и документы. Подготовил к изданию А. Н. Хачатрян. Ереван, 1968.

14 Список воинскому департаменту и находящимся в штате генералам, штаб-офицерам на 1780-1796 гг. СПб., 1780—1796, с. 162-163.

15 М. Г. Н е р с и с я н. Суворов и армяне.

16 Описание войны 1812 г. Дмитрием Ахшарумовым. СПб., 1819, 1839.

17 Акты Кавказской археографической комиссии (далее—АКАК); Т. IX, X, Тифлис, 1884, 1885. Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. Ч. III, М., 1833, с. 302—308.

ներից, լեհերից հետո հայերն էին գրավել հերթական հորիզոնականը: Հայ զորավարներից 17-ը հետևակի, հրետանու, հեծելազորի, ինժեներական ծառայությունների գեներալներ էին (բանակի գեներալներ), գեներալ-ադյուտանտներ, ծովակալներ: Շատերը բանակային գործող կորպուսների հրամանատարներ էին, զինվորական օկրուգների և շտաբների պետեր, գեներալ-նահանգապետեր, երկրամասերի և մարզերի կառավարիչներ, Ռուսաստանի պետական խորհրդի և ռազմական խորհրդի անդամներ: Նրանցից շատերը Կովկասի ազատագրված և Ռուսական կայսրությանը միավորված հողերում զինվորական և քաղաքացիական կառույցների ղեկավարներ էին[18]:

Հայ գեներալների ռազմավարչական գործունեությունը ծավալվում էր սևծովյան և ազովյան ափերից մինչև Կասպից ծով և Անգբկասպյան երկրամաս, ընդգրկելով Մերձազովյան և Սևծովյան Կովկասյան ափերը, Արխազիան, Զեչնիան, Թերեքի և կումիկների երկրամասը, Վերին, Միջին և Ներքին Դաղստանը, Բաքուն, Ղուբան, Շաքին, Շիրվանը, Ղարարաղը, Թավրիզը, Զաքաթալան, Նուխին, Վրաստանը, Հայաստանը, Կրասնովոդսկն ու Տաշքենգը:

1816-1823 թթ. Բաքվի պարետն էր գեներալ-մայոր Պավել Մելիքովը, որը Փարիզի մատույցներում կորցնելով աջ ձեռքը՝ մնաց շարքերում[19]: 1828-1829 թթ. Թավրիզի պարետն էր գնդապետ (ապա գեներալ-մայոր) Լազար Լազարյանը, որը միաժամանակ Արևելյան Հայաստան հայերի ներգաղթի հանձնաժողովի նախագահն էր: Նա իր օգնականներ Մովսես Արղությանի, Իվան Մելիքովի, Դավիթ Ղորղանյանի և այլ սպաների հետ իրականացրեց մոտ 45 հազար հայերի ներգաղթը Հայկական մարզ[20]: Գեներալ-մայորներ էին Դավիթ Արտյոմի Դելյանովը (Դիլանյան), Իվան և Դավիթ Սեմյոնի, Սեմյոն Դավթի Աբամելիքները: Իվանը Կիևի, ապա Պետերբուրգի զինանոցների պետն էր, Դավիթը՝ Տագանրոգի ուլանական գնդի հրամանատարը[21]:

Մեծ էր գեներալ-լեյտենանտ Ռոստոմ (Վալերիան) Գրիգորի Մադաթովի հմայքը ռուսական բանակում: Իր ծառայությունը սկսելով պավլովյան գնդում, նա կապիտանի կոչումով մասնակցեց ռուս-թուրքական պատերազմին, արժանացավ ոսկյա սրի, Աուրբ Գևորգի 4-րդ աստիճանի շքանշանի և փոխգնդապետի կոչման: Ալեքսանդրյան գնդի կազմում մտավ Փարիզ, որից հետո նշանակում ստացավ Կովկասում: 1816 թ. արդեն իր հայրենիքում՝ Ղարաբագում էր, այնտեղ տեղակայված զորքերի հրամանատարը: 1817-1822 թթ. Մադաթովը գեներալ-մայորի կոչումով Շաքիի, Շիրվանի, Ղարաբաղի օկրուգների զինվորական և քաղաքացիական պետն էր: Ռուս զինվորական պատմաբանը գրել է. «Լեռնային ժողովուրդների սովորույթների և լեզուների իմացությունը, բարեկիրթ բնավորությունը, ազնվությունը, արդարամտությունը հրապուրեցին տեղական բնակչութ-

18 Списки генералам, штаб-офицерам Российской императорской армии по старшинству за 1800 – 1916. СПб., 1800 – 1916.

19 Известия о жизни Павла Моисеевича Меликова. М., 1852.

20 Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ. հ. 5, էջ 172:

21 Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. Ч. III, с. 302 – 308.

յան սիրտը: Օգտվելով իր անձնական հմայքից, Մադաթովը առաջինը սկսեց կազմակերպել տեղական բնակիչների զինված ջոկատներ ռուսական զորքերի հետ համատեղ գործողությունների համար»: Մադաթովը աչքի ընկավ 1826 թ. սեպտեմբերին Շամխորի, ապա Ելիզավետպոլի տակ մղված մարտերում: Ստանալով գեներալ-լեյտենանտի կոչում՝ Մադաթովը տեղափոխվեց Բալկանյան ճակատ, 1828 թ. նոյեմբերին նշանակվեց 3-րդ հուսարական դիվիզիայի հրամանատար: Բալկանյան արշավանքի ժամանակ փառաբանված զորավարը ռազմաճակատի ամրողջ հեծելազորի հրամանատարն էր: Կուլևիչի տակ տարած հաղթանակի համար արժանացավ Ալեքսանդր Նևսկու շքանշանի[22]:

Ծանրակշիռ էր Զաքարյանների իշխանական տոհմից սերված Արղության-Դոլգորուկովների ավանդը ռուսական բանակի փառքի բազմապատկման գործում: Մովսես Զաքարի Արղության-Դոլգորուկովը (Արղութինսկին) հերթականությամբ զբաղեցրել է Նուխիի միջին գծի, Ախալցխայի մարզի պետի և վրացական գծային գումարտակների բրիգադի հրամանատարի, 1842 թ. Իմամի գեմ կռվող զորքերի Սամուրյան ջոկատի պետի, Դերբենդի և Ղուբայի ընդհանուր նահանգապետի, Մերձկասպյան զորքերի հրամանատարի և քաղաքացիական նահանգապետի պաշտոնները: Թեմիր Խան Շուրա քաղաքում 1877 թ. զորավարի մահվանից 11 տարի հետո կանգնեցվեց 26 տարի Կովկասում ծավալված մարտերի հերոս մասնակցի բրոնզե կիսանդրին:

Մովսես Արզությանը գեներալ-ադյուտանտ էր, հեծելազորի գեներալ: Հայերի մեջ առաջինն էր արժանացել Սուրբ Գևորգի երկու խաչի, առաջինը՝ 1829 թ. Օլթիի դրավման համար, երկրորդը՝ 1842 թ. Դաղստանում: Ռուս զինվորական պատմաբանը գրել է. «Երկաթյա կամքի, ազնվածին, հոգևոր բարեմասնություններով տեր մարդ էր: Մովսես Արղութինսկի-Դոլգորուկովը թողնում էր անջնջելի հմայք ոչ միայն իր զորքերի, այլև հակառակորդի վրա, որի մոտ Արղութինսկու անունը, որպես հաղթանակի խորհրդանիշ, առաջացնում էր սարսափ, նրա ողջամտությունը, անչափանդրությունը, բացսրտությունը, հաստատակամությունը Կովկասում դարձել էին առասպել, իսկ զինվորին խորությամբ իմանալը, ամենադժվարին իրադրությունում նրան պահպանելը վստահորեն նրան էին ենթարկում բանակը, որը զորավարին ամենուր հավատում էր անսահմանորեն: Բոլորը գիտեն, որ Արղութինսկին անհաջողություն չի ունենում, որ նրա մոտ ամեն ինչ կշռադատված է, մտածված, նախատեսված, նրա յուրաքանչյուր քայլը տանում է դեպի հաղթանակ, նպատակի իրականացում: Դրա համար նրան կոչում էին «Սամուրյան առյուծ»[23]:

Կովկասյան ճակատում նշանակալից էր հետևակի գեներալ Բարսեղ (Վասիլի) Հովսեփի Բեյրությանցի (Բեյբութովի) դերը: 1821 թ. նա մինդրելական եգերական գնդի հրամանատարն էր, միաժամանակ Իմերեթիայի գլխավոր հրամանատարը: Իր հմուտ գործողություններով Բեյբությանցը նպաստեց 1828 թ. օգոստոսի 9-ին Ախալցխայի տակ 90 հազարանոց թուրքական զորքերի ջախջախմանը, հանդիսացավ անառիկ ամրոցը գրված

22 Жизнь генерал-лейтенанта князя Мадатова. СПб., 1837, 1863.
23 АКАК, т. IX, с. XVII.

հայտնի գործիչներից մեկը. ստացավ գեներալ-մայորի կոչում, պարգևատրվեց ոսկյա սրով և նշանակվեց Ախալցխայի փաշալիկի կառավարիչ: 1829 թ. սկզբին ընդամենը երկու գումարտակով նա ոչ միայն հետ մղեց ամրոցի վրա 20 հազարանոց թուրքական զորաջոկատի հանկարծակի գրոհը, այլև հետապնդելով նրան՝ մատնեց պարտության: 1830-1838 թթ. Բեյբությանցը Հայկական մարզի կառավարիչն էր, ապա Հյուսիսային և Լեռնային Դաղստանի զորքերի հրամանատարը: 1846 թ. Հյուսիսային Կովկասում ծավալված գործողությունները հմտորեն ղեկավարելու համար պարգևատրվեց Սուրբ Գևորգի 3-րդ աստիճանի շքանշանով և նշանակվեց Անդրկովկասի քաղաքացիական մասի կառավարիչ:

1853 թ. սեպտեմբերի 9-ին Բեյբությանցը նշանակվեց Ախալցխայից մինչև Երևան ռուս-թուրքական սահմանի վրա կենտրոնացված կորպուսի հրամանատար: 1853 թ. նոյեմբերի 19-ին անցնելով Արփաչայը՝ 10 հազարանոց զորքով Բաշկադիկլարի տակ ջախջախեց 36 հազարանոց թուրքական բանակը և հայերի մեջ երկրորդը լինելով արժանացավ Սուրբ Գևորգի 2-րդ աստիճանի շքանշանի: Գեներալ-լեյտենանտ Բեյբությանցի ռազմական փառքի պսակը հանդիսացավ Քյուրյուկ Դարայի տակ 1854 թ. հունիսի 24-ին թուրքական 60 հազարանոց բանակի ջախջախումը, որը փաստորեն վճռեց պատերազմի ելքը: «Իշխան Բեյբությունը ցանկանում էր զարմացնել ինձ իր հաղթանակով, ես էլ կզարմացնեմ նրան իմ պարգևով»,– ասել է Նիկոլայ I-ը՝ ստանալով հաղթանակի լուրը: Եվ պարգևատրեց նրան Սուրբ Անդրեյ Նախավկայի շքանշանով: 1854 թ. Կովկասյան կորպուսի հրամանատար Բեյբությանցը նշանակվեց նաև ռուս-թուրքական սահմանի երկայնքով քաղաքացիական մասի կառավարիչ և կորպուսի կազմում չգտնվող զորքերի պետ: 1856 թ. նա նշանակվեց Ռուսական կայսրության ռազմական խորհրդի անդամ, Անդրկովկասի քաղաքացիական կառավարչության պետ, ամբողջ երկրամասի գլխավոր վարչության խորհրդի նախագահ և կովկասյան դծի զորքերի հրամանատար[24]:

Արևելյան պատերազմի Կովկասյան ճակատում հայտնի էին ծովակալ Լազար Մարկոսի Սերեբրյակովը (Արծաթագործյան), բանակի գլխավոր ինտենդանտ, գեներալ-լեյտենանտ Մկրտիչ Գալուստովը և այլ բարձրաստիճան սպաներ: Սերեբրյակովը հաջողությամբ իրականացրեց իրեն վստահված խնդիրը՝ սևծովյան ափերի պաշտպանության կազմակերպումը թուրքական ներխուժումից, որի համար արժանացավ ոսկյա սրի[25]:

Կովկասյան ճակատում 1877-1878 թթ. Թուրքիայի դեմ ծավալված մարտերում ցուցաբերած սխրանքի համար 40 հայ զորավար և սպա արժանացան Սուրբ Գևորգի շքանշանի: Նրանցից 4-ը այդ պարգևին արժանացել են երկու անգամ: Այս վերջիններն էին՝ հեծելազորի գեներալ, գեներալ-ադյուտանտ, Կովկասյան գործող կորպուսի հրամանատար, Կովկասյան ճակատում բոլոր ռազմական գործողությունների անմիջական ղեկավար Միքայել Լորիս-Մելիքովը, հետևակի գեներալ, գեներալ-ադյուտանտ, Կարսը գրոհող կորպուսի հրամանատար Հովհաննես Լազարևը, Երևանյան

---

24 АКАК, т. VII, с. V; Список генералам по старшинству. СПб., 1853, с. 86; 1857, с. 75.

25 Վ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով. Երևան, 1979:

ջոկատի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Արշակ Տեր-Ղուկասովը, գեներալ-մայոր Հակոբ Ալխազովը[6]: Մինչ այդ Ալխազովը Ալեքսանդր II-ի հրամանով պարգևատրվել էր Կովկասի սևծովյան շրջանը, այդ թվում Աբխազիան և Սուխումը թուրքերից մաքրելու համար: Նա այդ ժամանակ Քութայիսի, Սուխումի, Ինգուրիայի, Գուրիայի միավորված ջոկատների հրամանատարն էր: Հետագայում Ալխազովը դարձավ կորպուսի հրամանատար, հետևակի գեներալ, կայսրության ռազմական խորհրդի անդամ: Սուրբ Գևորգի շքանշանով պարգևատրվեցին Սևծովյան շրջանի կառավարիչ, գեներալ-մայոր Բեյրութ Մարտիրոսի Շելկովնիկովը, գեներալ-մայոր, հետևակային բրիգադի, ապա միավորված հեծյալ դիվիզիայի հրամանատար Իվան Եգորի Լորիս-Մելիքովը: Շելկովնիկովը նշանակվեց Էրզրումի մարզի կառավարիչ: Նա եղել էր նաև Զաքաթալայի օկրուգի կառավարիչ[27]:

Թուրքիայի դեմ տարած հաղթանակը չնշվեց միայն շքանշաններով: Կարսը գրավելու համար Լորիս-Մելիքովը արժանացավ կոմսի տիտղոսի: Այսպիսով, ավարտվեց ռազմական և պետական գործչի Կովկասյան 32-ամյա կենսագրությունը, որը թուրքերի և լեռնականների դեմ մղված 180 մարտական գործողությունների պատմությունն էր:

1853 թ. վոխգնդապետ Լորիս-Մելիքովը պատերազմն սկսեց որպես հեծյալ ավանգարդային ջոկատի պետ, այն ավարտեց գեներալ-մայորի կոչումով: Նա հատկապես աչքի ընկավ Բայանդուրի, Ալեքսանդրապոլի, Կարսի ճակատամարտերում, պարգևատրվեց ոսկյա սրով, նշանակվեց Կարսի մարզի կառավարիչ, Աբխազիայի զորքերի պետ: Լորիս-Մելիքովը 1869 թ. Հարավային Դաղստանի զինվորական պետն էր և Դերբենդի քաղաքագլուխը, 1863 թ. մինչև 1875 թ., 12 տարի, Թերեքի մարզի պետը և կազակային զորքերի ատամանը (գեներալ-նահանգապետի լիազորություններով), 1865 թ. նա արդեն գեներալ-ադյուտանտ էր: Թերեքի մարզը ընդգրկում էր օսեթական, կաբարդական, կումիկական, Իչկերիայի, Չեչնիայի, Արգունի, լեռնային և ինգուշական օկրուգները: Կովկասի փոխարքա, Կովկասյան բանակի հրամանատար Մուրավյովը գրել է. «Ճիշտ են ասում, Կովկասում Թերեքը մեկն է, Լորիս-Մելիքովը՝ միակը»:

Պատերազմն ավարտված էր. Լորիս-Մելիքովը նշանակվեց Աստրախանի, Սամարայի, Սարատովի նահանգների միացյալ նահանգապետ՝ արտակարգ լիազորություններով, ապա Խարկովի նահանգապետ, դարձյալ արտակարգ լիազորություններով: 1880 թ. նա նշանակվեց «այլախոհների դեմ մղվող պայքարի» պետական կարգադրիչ հանձնաժողովի նախագահ, ապա Ռուսաստանի ներքին գործերի նախարար, այս անգամ դիկտատորական լիազորություններով: «Այդ պաշտոնում ևս նա մնաց նույն հումանիստը, օրինապաշտը, գործին շրջահայաց նայող պետական գործիչը»,—

26 А. Гизетти. Сборник статей о георгиевских кавалерах и боевых знаках отличий кавказских войск. Тифлис, 1901. Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1898.

27 А. А. Старчевский. Памятник Восточной войны. 1877—1878 гг. СПб., 1878. Об А. Альхазове—с. 5—7, И. Лазареве— с. 191—195, М. Лорис-Меликове— с. 210—217, Иване Лорис-Меликове— с. 217—219, Л. Меликове— с. 239—241, А. Тер-Гукасове— с. 407—413, Б. Шелковникове— с. 458—461.

գրել է Լորիս-Մելիքովի կենսագիրը: 1881 թ. մարտի 1-ին Լորիս-Մելիքովը հանդես եկավ Ռուսաստանի դեմոկրատացման իր սահմանադրական առաջարկություններով: Նրա իրագործմանը խանգարեց Ալեքսանդր II-ի սպանությունը և Լորիս-Մելիքովի պաշտոնանկ լինելը[28]:

Կովկասյան առաջին կորպուսի հրամանատարի պաշտոնում Լորիս-Մելիքովին փոխարինեց 37 տարի կովկասյան զինվորական օկրուգում ծառայած հետևակի գեներալ, գեներալ-ադյուտանտ Հովհաննես Լազարևը: Շարքային զինվորից բարձրագույն զինվորական կոչումների արժանացած զորավարը շուտով նշանակվեց թուրքեստանյան էքսպեդիցիոն կորպուսի հրամանատար: Մինչև այդ նա ուներ վարչական կառավարման մեծ փորձ: 1854 թ. եղել էր Դարգինյան օկրուգի կառավարիչ, 1859 թ. Հյուսիսային, ապա Միջին Դաղստանի զորքերի հրամանատար և Մերձկասպյան երկրամասի նվաճված շրջանների ժամանակավոր կառավարման պետ: Լինելով անընկճելի կամքի տեր և ակտիվ գործիչ՝ նա մեծ համբավ և համակրանք էր ձեռք բերել նաև տեղական բնակչության շրջանում: Ահա կամքի դրսևորման մեկ օրինակ. Կարսի պաշարման ժամանակ, 1877 թ. նոյեմբերին, երբ Լազարևին առաջարկվեց հետաձգել գրոհը, նա պատասխանեց. «Հայտնեցեք Ձեզ ուղարկողին, որ ես Կարսը գրոհում եմ անդարձ: Ձեմ գրավի այսօր գիշերը, կվերցնեմ ցերեկը, չեմ վերցնի ցերեկը, կկռվեմ և կվերցնեմ գիշերը»: Եվ վերցրեց[29]:

Լազարևից հետո կովկասյան գործող կորպուսի հրամանատար նշանակվեց Երևանյան ջոկատի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Արշակ Տեր-Ղուկասովը: Նա ռուսական բանակի խիզախ գեներալներից էր, մասնակցել էր Գունիբում Շամիլի շրջապատմանը և գերեվարմանը, ապա նշանակվել էր Թերեքի մարզի միջին բաժնի պետ (ընդգրկում էր Թերեքի մարզի չեչենական բնակչություն ունեցող Իչկերիայի, Արգունի, Ձեչնիայի և լեռնային օկրուգները): Այս նույն տարածքում Տեր-Ղուկասովից հետո պետ նշանակվեց գեներալ-մայոր Ալեքսանդր Թումանովը: Ախալ-Թեքինյան արշավանքի օրերին, հրամանատար Լազարևի վախճանվելուց հետո, այդ պաշտոնը հանձնարարվեց Տեր-Ղուկասովին՝ ըստ ռուս զինվորական պատմաբան Ատարչևսկու «ռուսական բանակի ամենակրթված, համեստ և հարգված, շատ կարդացած գեներալներից մեկին»: Տեր-Ղուկասովը ավարտել էր Պետերբուրգի զինվորական ճանապարհային ինժեներների ինստիտուտը: Նա Անդրկասպյան զինվորական օկրուգի հրամանատարն էր[30]:

Բարձր դիրքեր էին զբաղեցնում հեծելազորի գեներալ, գեներալ-ադյուտանտ Լևոն Մելիքովը, որը Դաղստանի զինվորական և քաղաքա-

---

28 И. А. Белоголовый. Граф М. Т. Лорис-Меликов. Воспоминания. — Русская старина, ежемесячное историческое издание. СПб., 1889, с. 579-615; И. А. Белоголовый. Воспоминания и другие статьи. М., 1897, с. 182—223. Приложение I—XII. Российский государственный исторический архив. СПб., ф. 866, оп. 1, дд. 1—175.

29 В. А. Потто. Генерал-адъютант Иван Давидович Лазарев. Тифлис, 1900.

30 Братская помощь..., с. 302—313; Эриванский отряд в кампанию 1877—1878 гг. — Военный сборник. СПб., 1889, № 4,5; 1890, № 6.

ցիական կառավարման պետն էր, որոշ ժամանակ Կովկասի փոխարքայի պաշտոնակատար[31], գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Սաղինովը՝ Անդրկովկասի տեղական զորքերի հրամանատարը, Ստեփան Քիշմիշովը՝ Էրզրումի մարզի պետը, գեներալ-լեյտենանտ Թարխան Խոջամինասովը և այլ զինվորականներ[32]:

Լինելով ռուսական բանակի զորավարներ, ծառայելով Ռուսաստանին, բարձրաստիճան հայ զինվորականները չէին մոռանում իրենց ազգային պատկանելության և դավանանքի մասին, հանդես էին գալիս որպես հայ ազատագրական պայքարի ջատագովներ, Կովկասյան և Բալկանյան ճակատներում մարտնչելով թուրքերի դեմ, տոգորված էին հայրենիքը՝ Հայաստանը, օսմանյան լծից ազատ տեսնելու տենչով: Թերեքի մարզի պետ և կազակական զորքերի հրամանատար եղած ժամանակ Լորիս Մելիքովը 1864 թ. նոյեմբերի 15-ին զգուշացնում էր Կովկասի փոխարքային՝ թազավորի եղբորը, Արևմտյան Հայաստանի քաղաքները և բնակավայրերը Կովկասից վերաբնակեցվող մահմեդականներով շրջափակելու վտանգի մասին, տեղեկացնում, որ Կարսի, Եփրատի և Էրզրումի դաշտավայրերում, Վանում ապրում են հայեր, որոնք իրենց կրոնով և բնույթով հակված են դեպի Ռուսաստանը: Գեներալը գտնում էր, որ չպետք է թույլ տալ մահմեդականների վերաբնակեցումը Կարսի փաշալիկում՝ Սողանլուի լեռնանցքից մինչև Ալաշկերտ և Վանա լիճ՝ հայերի անվտանգությունը ապահովելու և Ռուսաստանի սահմանները ամուր պահելու համար: Փոխարքայի համաձայնության մասին Լորիս-Մելիքովին հայտնվեց նոյեմբերի 30-ին[33]:

Բարսեղ Բեհբությանը, Լևոն Մելիքովը, Միքայել Լորիս-Մելիքովը արժանացան բարձրագույն պարգևի՝ Անդրեյ Նախավկայի շքանշանի:

Հայ բարձր սպայությանը պատասխանատու բնագավառների կառավարում էր վստահված նաև XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին: Հեծելազորի գեներալ Ադամ Սողոմոնի Ղորղանյանը Վիննիցայում տեղակայված 12-րդ բանակային կորպուսի հրամանատարն էր, գեներալ-մայոր Գրիգոր Գավրիլի Ղորղանովը՝ հրետանային արհեստանոցների պետը, գեներալ-մայոր Ալեքսանդր Ղորղանյանը՝ Խաբարովսկի զինվորական օկրուգի շտաբի պետը, հրետանու գեներալ Ալեքսանդր Ադամի Աթաբեկովը՝ 17-րդ բանակային կորպուսի հրետանու պետը (Մոսկվայի օկրուգ), գեներալ-լեյտենանտ Արտյոմ Սողոմոնի Վարդանյանը՝ 21-րդ հրետանային բրիգադի հրամանատարը (Վիլնոյի օկրուգ): Այդ բրիգադը 1812 թ. Բորոդինոյի դաշտում ղեկավարել էր հայ զորավար Արապետովը: Գեներալ-մայոր Գրիգորի Ալեքսանդրի Թումանովը՝ Վարշավայի զինվորական օկրուգի շտաբի հերթապահ գեներալն էր, գեներալ-լեյտենանտ Սողոմոն Իոսիֆի Աբամելիքովը՝ Կովնոյի ամրոցային հրետանու պետը, գեներալ-մայոր Իսահակ Թոխաթլյանը՝ Վլադիվոստոկի ամրոցային հրետանու 2-րդ բրիգադի հրամա-

---

31 Пятидесятилетний юбилей служения в офицерских чинах члена Государственного Совета, генерал-адъютанта, генерала от кавалерии, князя Ивана Ивановича Меликова. — Материалы из газеты "Кавказ", №№ 323—336, 1887.

32 Список генералам по старшинству..., СПб., 1877—1878. С. К и ш м и ш е в. Война в Армении. Тифлис, 1883.

33 Г. А. Д з а г у р о в. Переселение горцев в Турцию. Материалы по истории горских народов. Ростов-Дон, 1925, с. 32—36.

նատարը, գեներալ-մայոր Նիկոլայ Իվանի Լազարևը՝ Դոնի կազակային առաջին օկրուգի հրամանատարը, գեներալ-մայոր Իվան Սերգեյի Բազրամովը՝ գլխավոր շտաբի մոբիլիզացիոն բաժնի պետը, գեներալ-մայոր Իվան Սիմոնովը՝ գլխավոր շտաբի ինժեներային վարչության բաժնի պետը, հեծելազորի գեներալ Նիկոլայ Աղաֆոնի Ակիմովը՝ սահմանապահ զորքերի Արևմտյան գոտու հրամանատարն էր, հեծելազորի գեներալ Աղասի Բեկ-Աֆշարովը հեծելազորի սպաների դպրոցի պետը: Հրետանու գեներալ էր Մաթևոս Ստեփանի Լալայանը, ինժեներական զորքերի գեներալ էր Ալեքսանդր Ախշարումովը[34]:

Զինվորական անձնակազմի և սպայության նոր համալրում եղավ Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից: Պետրոգրադի հայկական կոմիսարիատի 1917 թ. դեկտեմբերի 20-ի տվյալներով (ստորագրել է գեներալ-մայոր Լևոն Թադևոսի Տիգրանյանը) 1914-1916 թվականներին Արևմտյան և Կովկասյան ռազմաճակատներում կռվել են 180 հազար հայեր, մինչև 1917 թ. սկիզբը շարքից դուրս էր եկել 60 հազար հայ (սպանվել կամ վիրավորվել)[35]: Մոտ յոթ հազար հայեր ծառայում էին կամավորական խմբերում: Պաշտոնական տվյալներով 1914 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. դեկտեմբերի 30-ը միայն Թիֆլիսի տեղական բրիգադով անցել էր զինվորական ծառայության համար սլիտանի 121.991 հայ: Վրացիների թիվը հայերից 878 մարդով պակաս էր՝ 121.113, թաթարներինը՝ 80 անգամ պակաս, ընդամենը՝ 1341 հոգի էր: Նկատենք, որ զորակոչված 177.787 վրացիներից ազատվել էին 56.674-ը՝ մոտ մեկ երրորդը, 147.344 հայերից՝ 25.353-ը, մոտ մեկ վեցերորդ մասը: Միայն Գանձակից զորակոչվել էր 31.896 հայ, Բաքվից՝ 11.797, Թիֆլիսից՝ 23.537 հայ[36]: Կովկասյան ճակատում աչքի ընկան գեներալներ Թովմաս Նազարբեկյանը, Մովսես Սիլիկյանը, Գավրիլ Ղորղանյանը, Պավել Մելիք-Շահնազարյանը, Ալեքսանդր Մելիք-Ալավերդյանը, Իվան Հախվերդյանը, Միքայել Արեչյանը, Դանիել Բեկ-Փիրումյանը, Վաղարշակ Տեր-Հակոբյանը, Բեժանբեկը և այլ զորավարներ:

Հայ գեներալները առաջին գծի վրա էին նաև 1917 թ. ժամանակավոր կառավարության օրերին: 1917 թ. հոկտեմբերին Պետրոգրադի զինվորական օկրուգի հրամանատարը Հակոբ Բագրատունին էր, հրամանատարի տեղակալը՝ Լևոն Տիգրանյանը, Ձմեռային պալատի պարետը և զինվորական նախարարի օդնականը՝ գեներալ-մայոր Կոստանդին Թումանյանը, երկրորդ ամրացված շրջանի հրամանատարը՝ գեներալ-լեյտենանտ Ստեփան Քալանթարյանը[37]: Ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում տասնյակ

34 Список генералам по старшинству. 1884—1916. Общий список офицерским чинам русской императорской армии на 1 января 1910. СПб., 1910. Военно-исторический сборник армии за 1912 г. СПб., 1914.

35 Очерк развития вопроса о развертывании армянских вооруженных сил в Петрограде в 1917 г. — Приложение к книге G. K a j a 1 o f f. The Battle of Sardarapad. Paris, 1967, p. 99—100.

36 ЦГВИА РФ, ф. 2003, оп. 2, д. 338, л. 85.

37 Там же, ф. 409, оп. 1. Послужной список, л. 170—452; ф. 1343, оп. 10, д. 663/а, л. 26—51.

այլ սպաներ: Պոզոյան եղբայրները հրետանավորներ էին՝ Ռուբենը գեներալ-լեյտենանտ, Գևորգը և Լևոնը՝ գեներալ-մայորներ[38]:

* * *

Պատմական խոր արմատներ ունեցող հայ-ռուսական հարաբերությունները իրենց էությամբ մնացին նույնը նաև Խորհրդային Միության փլուզումից հետո: Որոշ դեգերումներից հետո Հայաստանի երիտասարդ քաղաքագետները հասկացան Ռուսաստանի հետ ամուր փոխհարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը, հարաբերություններ, որոնք ստուգվել են պատմական փորձով: Եվ դա այն պայմաններում, երբ անկախ հանրապետությունների ստեղծումը հասցրեց Կովկասում աշխարհաքաղաքական ուժերի փոփոխման, էթնո-ազգային բախումների սրման, ԱՄՆ-ի ձգտումների անկաշկանդության ուժեղացնելու իր ազդեցությունը աշխարհի տարբեր տարածաշրջաններում, այդ թվում և Կովկասում, իր վրա վերցնելու քաղաքական գործընթացի լոկոմոտիվի դերը: Եվ այդ ամենը՝ ազգային շահերի և ազգային անվտանգության պաշտպանության քողի տակ: Տարածաշրջանում Ռուսաստանի չեզոքացման ամերիկյան ծրագիրը իրականացնում է Թուրքիան իր ամբիցիոզ շահախնդրություններով, ձգտելով պանթուրքիզմի բազայի վրա մեծ Թուրանի գաղափարի իրականացման:

Բազմիցս առաջ է քաշվել Թուրքիայի դերը Կովկասում, հայտարարվել Թուրքիայի պատրաստակամության մասին՝ իր վրա վերցնելու «քաղաքական պատասխանատվությունը տարածաշրջանում Ադրիատիկից մինչև Չինաստանի սահմանները»: Հնչում են Ռուսաստանից Կովկասի անջատման և Ռուսաստանի՝ Կովկասից հեռացման կոչեր: Սկսվեց պայքար «վակուումի» զբաղեցման համար Անդրկովկասում, որը այսօր արևմտյան քաղաքագետների կողմից անվանվում է «Հարավային Կովկաս» բացահայտ հակառուսական շեշտադրումով: Այդ տերմինը պատրաստակամությամբ ընդունվում է նաև հետխորհրդային «նոր դեմոկրատների» կողմից: Մինչդեռ «Վակուում գոյություն չունի, Ռուսաստանը ունի ծանրակշիռ պատմական, տնտեսական և քաղաքական նպատակներ այդ տարածաշրջանում, Ռուսաստանը Թուրքիայի հետ չի կիսի ազդեցության ոլորտները Անդրկովկասում, չի մասնակցի Անդրկովկասի բաժանման և ոչ մի գործարքի»: Ահա այդպիսին է Ռուսաստանի քաղաքական ղեկավարության դիրքորոշումը: Իր վճռականությունը Ռուսաստանը ցույց տվեց ղարաբաղյան բանակի 1992, 1993 թվականների պատերազմի և հաղթանակի տարիներին, ինչպես և այն ժամանակ, երբ առաջացել էր Հայաստանի ներքին գործերին թուրքական զինված միջամտության վտանգը: Հայ-թուրքական սահմանում կենտրոնացվել էին թուրքական խոշոր զինված ուժեր, և Հայաստանի վրա թուրքական հնարավոր հարձակումը հանրապետություն ժամանած ռուսաստանյան զինվորական ու քաղաքական ղեկավարության կողմից դիտվեց որպես հարձակում նաև Ռուսաստանի վրա:

---

38 Список генералам по старшинству. 1916 г. СПб., 1916.

Հայաստանի Հանրապետության ազգային բանակը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակը համալրվեցին ռուսական զինված ուժերի հարյուրավոր հայ սպաներով, տասնյակ գեներալներով, շտաբային աշխատողներով, տարբեր զորատեսակների զինվորական մասնագետներով: Հայոց բանակը ամրապնդվեց, բարձրացավ նրա մարտական ոգին: Տարածաշրջանում խաղաղության կայունացման և ամրապնդման ջանքերին է ուղղված Հայաստանում ռուսական զինվորական հենակետի առկայությունը (որի գործունեությունը 2000 թ. մարտի 17-ի համաձայնագրով երկարացվեց ևս 25 տարով), «Հայաստան» սահմանապահ խմբի գոյությունը: 1995 թվականից համաձայնեցված աշխատանք է տարվում հակաօդային պաշտպանության, զորքերի համագործակցության և համատեղ վարժությունների անցկացման ուղղությամբ:

Համագործակցությունը Ռուսաստանի և Հայաստանի միջև օբյեկտիվ իրականություն է, որը արտահայտվում է ոչ միայն երկկողմանի համաձայնագրերում, այլև հայ և ռուս ժողովուրդների գործողություններում ու ձգտումներում, քանիցս պատմական փորձով ստուգված դաշնությամբ, որի գերագույն դրսևորումներից էր Հայրենական մեծ պատերազմում նրանց մարտական համագործակցությունը, ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ տաքած փառավոր հաղթանակը: